


<p>ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԱՂԱՎԱՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-2025/05 ք. Երևան «18» 08-----2025թ.</p>	<p>STATE PROCUREMENT CONTRACT ON PERFORMING WORKS OF CONSTRUCTION OF A PAVILION FOR STATE NEEDS No ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-2025/05 City of Yerevan «18» 08-----2025</p>
<p>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Դ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նուեվո Դիզայն Իվենթ Օրգանայզինգ» ՍՊԸ, ի դեմս Անաստասիա Բոբրիշևայի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:</p>	<p>The Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia, represented by D. Gasparyan, Secretary-General, acting on the basis of the Statute of the Ministry (hereinafter referred to as "the Client"), on the one hand, and Nuevo Design Event Organizing L.L.C., represented by Anastasiia Bobrysheva (hereinafter referred to as "the Executor"), on the other hand, concluded this Contract on the following:</p>
<p>1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</p> <p>1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տաղավարի կառուցապատման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:</p> <p>1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:</p>	<p>1. SUBJECT MATTER OF THE CONTRACT</p> <p>1.1. The Client shall assign, and the Executor shall undertake the obligation of performing works of construction of a pavilion (hereinafter referred to as "the works"), pursuant to the requirements of Technical Specification-Procurement Schedule prescribed by Annex No 1 constituting an integral part of this Contract (hereinafter referred to as "Contract").</p> <p>1.2. The works shall be performed in compliance with the Technical Specification-Procurement Schedule prescribed by Annex No 1 to this Contract and within the time limits prescribed thereby.</p>
<p>2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>	<p>2. RIGHTS AND RESPONSIBILITIES OF THE PARTIES</p>



2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1. The Client shall have the right:

2.1.1. To check, at any time, the progress and quality of the works performed by the Executor without intervening in the activities of the latter:

2.1.2. Where the works performed do not comply with the Technical Specification-Procurement Schedule indicated in Annex No 1 to the Contract:

(a) Not to accept the works and prescribe a reasonable time limit at his/her discretion for gratuitous substitution of the works of improper quality with works complying with the Contract, and request from the Executor to pay the fine provided for by point 5.2, as well as the penalty provided for by point 5.3 of the Contract;

(b) To refuse to perform the Contract and request to return the amount paid for the works, as well as request from the Executor to pay the fine provided for by point 5.2 of the Contract;

2.1.3. To unilaterally rescind the Contract where the Executor has made a substantial violation of the Contract. Violation of the Contract by the Executor shall be deemed to be substantial where:

(a) the works performed fail to comply with the requirements prescribed by Annex No 1 to the Contract;

(b) the time limit for performance of the works has not been complied with.



<p>2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:</p> <p>2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:</p> <p>2.3 Կատարողն իրավունք ունի՝</p> <p>2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:</p> <p>2.4 Կատարողը պարտավոր է՝</p> <p>2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:</p> <p>2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:</p>	<p>2.2. The Client shall be obliged:</p> <p>2.2.1. To discuss and accept the results of the works performed in compliance with Technical Specification-Procurement Schedule, and in case of detecting shortcomings in the result of the works — immediately inform the Executor thereon in writing.</p> <p>2.2.2. To pay the Executor — in case of accepting the results of the works — the amounts payable to the latter and in case of not complying with the time limits — also the penalty provided for by point 5.5 of the Contract.</p> <p>2.3. The Executor shall have the right:</p> <p>2.3.1. To request from the Client to pay the amounts payable thereto, and in case of not complying with the time limit indicated in point 4.2 of the Contract by the Client — also the penalty provided for by point 5.5 of the Contract.</p> <p>2.4. The Executor shall be obliged:</p> <p>2.4.1. To ensure the performance of the works under the conditions prescribed by Annex No 1 to the Contract, governed by the existing legislation.</p> <p>2.4.2. To pay the penalty and fine provided for in points 5.2 and 5.3 of the Contract in cases prescribed by the Contract.</p>
<p>3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ</p> <p>3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի</p>	<p>3. PROCEDURE FOR DELIVERY AND ACCEPTANCE OF THE WORKS</p> <p>3.1. The performed works shall be accepted by signing a Delivery and Acceptance Protocol</p>



միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման

between the Client and the Executor. The delivery of the works to the Client shall be recorded through a document mutually approved by the Client and the Executor, indicating the date of drawing up the document.

Before the day provided for by the Contract for performance of the works included, the Executor shall provide the Client with the document recording the fact of delivery of the works signed thereby (Annex N 3.1) and 2 copies of the Delivery and Acceptance Protocol (Annex N 3).

3.2. The Delivery and Acceptance Protocol shall be signed where the works performed complies with the terms of the Contract. Otherwise, the results of performance of the Contract or a part thereof shall not be accepted, the Delivery and Acceptance Protocol shall not be signed and the Client shall:

- (a) undertake measures provided for by the Contract for such situation to regulate the issue;
- (b) apply liability measures provided for by the Contract against the Executor.

3.3. The Client shall, within 5 working days counted from the working day following the day of receipt of the Delivery and Acceptance Protocol, submit to the Executor one copy of the Delivery and Acceptance Protocol signed thereby or the reasoned rejection for not accepting the works.

3.4. Where the Client does not accept the works performed or does not reject the



<p>արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:</p> <p>3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:</p>	<p>acceptance thereof within the period prescribed by point 3.3 of the Contract, the works performed shall be deemed to be accepted, and the Client shall provide to the Executor — on the working day following the deadline prescribed by point 3.3 of the Contract — the Delivery and Acceptance Protocol approved by the Client.</p>
<p>4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ</p> <p>4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 66,563 (վաթսուսուկեց հազար հինգ հարյուր վաթսուներեք) Եվրոյին համարժեք ՀՀ դրամ:</p> <p>Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:</p> <p>Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:</p> <p>4.1.1 Պայմանագրի գնից 19,968 (տասնինը հազար ինը հարյուր վաթսունութ) Եվրոյին համարժեք ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող</p>	<p>4. CONTRACT PRICE</p> <p>4.1. The price of the works to be performed by the Executor under the Contract comprises 66,563 (sixty-six thousand five hundred sixty-three) Euro to AMD.</p> <p>The price includes all the expenses made by the Executor, including taxes, duties and other payments prescribed by the legislation of the Republic of Armenia.</p> <p>The price for performing the works is fixed and the Executor and Client are not entitled to require an increase and decreasing of that price, respectively.</p> <p>4.1.1 The Client shall transfer 19,968 (nineteen thousand nine hundred sixty-eight) Euros in AMD, to the Executor's bank account as an advance payment. Redemption of the advance payment shall be carried out in the form of deductions (withholdings) from payments made on the basis of the Delivery and Acceptance Protocols. Moreover, no payment</p>



վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված վիաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման


shall be made to the Executor until the full redemption of the advance payment.

4.2. The Client shall pay for the works performed in Armenian drams, in a non-cash form, by transferring the funds to the settlement account of the Executor. Transfer of monetary funds shall be made on the basis of the Delivery and Acceptance Protocol, in the amounts and months provided for by the payment schedule of the Contract (Annex No 2). Where the Protocol is drawn up after the 20th day of the given month and financial means are envisaged during that month by the payment schedule, the payment shall be made within 30 working days but not later than before 30th of December of the given year.

Moreover, in order to process a payment, within 3 working days after the date of signing the handover-acceptance protocol, the customer enters the payment instruction and a copy of the handover-acceptance protocol into the treasury system of the authorized body, and on the basis of the documents submitted in accordance with the established order, the authorized body makes the given payment if the handover-acceptance protocol is entered into the treasury system within the time limits set by the payment schedule of this contract, within five working days.



<p>ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:</p>	
<p>5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ</p> <p>5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:</p> <p>5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:</p> <p>5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:</p> <p>5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:</p> <p>5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի</p>	<p>5. LIABILITY OF PARTIES</p> <p>5.1. The Executor shall be responsible for compliance with the requirements of this Contract for performance of the works.</p> <p>5.2. In each case of performing works not complying with the technical description specified in Annex No 1 to this Contract, a fine shall be charged from the Executor in the amount of 0.5 (zero point five) per cent of the amount provided for by point 4.1 of the Contract. Moreover, the fine shall be calculated also in the case where the works are performed within the time limit prescribed by this Contract but they are not accepted by the Client.</p> <p>5.3. In case of violation of the time limits prescribed for the performance of works provided for by the Contract, a penalty in the amount of 0,05 (zero point five hundredth) per cent of the price of the unperformed work subject to performance shall be charged from the Executor for each delayed working day.</p> <p>5.4. The fine and the penalty provided for by points 5.2 and 5.3 of the Contract shall be calculated and offset along with the amounts subject to payment to the Executor for the results of the works performed.</p> <p>5.5. In case the Client violates the time limit provided for by point 4.2 of the Contract, a penalty in the amount of 0,05 (zero point five hundredth) per cent of the unpaid amount subject to payment shall be calculated against</p>



նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) սուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

the Client for each delayed working day.

5.6. In cases not provided for by the Contract, the Parties shall be held liable as prescribed by the legislation of the Republic of Armenia for non-performance or improper performance of their obligations.


5.7. The payment of a penalty and/or fine shall not exempt the Parties from fulfilling their contractual obligations fully and properly in accordance with the requirements established by the contract.

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԳԵՅՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը

6. FORCE MAJEURE

In case of failure to fully or partially fulfil the obligations assumed under this Contract and the Agreements concluded based on this Contract, the Parties shall be exempt from liability, where it occurred due to a force majeure which arose following the conclusion of this Contract and which the Parties could not have foreseen or prevented. Such situations shall be earthquake, flood, fire, war, declaring martial law and state of emergency, political disturbances, strikes, termination of the operation of communication means, the acts of the state bodies etc., that make impossible the fulfilment of the obligations assumed under this Contract. Where the effect of the force majeure lasts for more than 3 (three) months, each of the Parties shall have the right to rescind the Contract by informing the other



<p>և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:</p>	<p>Party thereon in advance.</p>
<p>7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p> <p>7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:</p> <p>Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:</p> <p>7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:</p> <p>7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը,</p>	<p>7. MISCELLANEOUS</p> <p>7.1. This Contract shall enter into force from the moment of it being signed by the Parties and shall be in effect until the full performance by the Parties of the obligations assumed under this Contract.</p> <p>The registration of the Contract by the Ministry of Finance of the Republic of Armenia shall act as a condition for the fulfilment of the rights and responsibilities of the Parties provided for by the Contract.</p> <p>7.2. A Party's payment obligation having arisen from the Contract may not terminate with the offset of a counter-obligation having arisen from another contract without the written consent of the Parties confirmed with a seal. The right of a claim having arisen from the Contract may not be transferred to another person without the written consent of the debtor party.</p> <p>7.3. Where, as a result of control or supervision over compliance with the requirements of the Law or as a result of examination of the complaints as prescribed by law, it is recorded that in the procurement process, prior to the conclusion of the Contract,</p>



Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սպա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:


Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, սպա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք

the Executor had submitted false documents (information and data) or the decision on declaring him or her a selected bidder does not comply with the legislation of the Republic of Armenia, the Client shall — upon the emergence of these grounds — unilaterally rescind the Contract where the detected deficiencies having emerged prior to the conclusion of the Contract would have constituted a ground for not concluding the Contract pursuant to the legislation of the Republic of Armenia on procurement. Moreover, the Client shall not bear the risk of losses or lost profit incurred by the Executor as a result of unilateral rescission of the Contract, and the latter shall be obliged to compensate for the losses suffered by the Client by his or her fault as prescribed by the law of the Republic of Armenia and to the extent to which the Contract has been rescinded.

7.4. Disputes pertaining to the Contract shall be subject to examination in the courts of the Republic of Armenia.

7.5. Amendments and supplements may be made to the Contract only upon mutual consent of the Parties by way of conclusion of an agreement that will become the integral part of the Contract.

It shall be prohibited to make modifications to the Contract and — where the contract price is factor-based — also to any subsequent agreement attached to the Contract, which result in the artificial change of the volumes of the work to be procured or the unit price of the works to be acquired or the contract price.



հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի գրավոր առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:


Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են

Each modification to the Contract under the influence of factors beyond the will of the Parties to the Contract shall be defined by the Government of the Republic of Armenia.

7.6. The period for completing the work may be extended up to the expiry of that time limit if there is a written proposal from the Contractor, provided that the demand at the Client for use of the works still exists, and the written proposal of the Executor has been submitted not later than at least 7 calendar days before expiry of the time limit initially prescribed by the Contract for performance of the works. Moreover, in the case prescribed by this point, the time limit for performance of the works may be extended once for up to 30 calendar days, but for not longer than the period prescribed by the Contract.

7.7. In case of proper performance of the Contract, the benefits (savings) gained or damages incurred by the Parties (Executor or Client) shall be deemed to be the benefit or damage of the given Party.

The obligations of the Parties to the Contract with respect to third parties, including other transactions concluded by the Executor within the scope of performance of the Contract and the obligations resulting therefrom shall be beyond the scope of the Contract and may not impact the acceptance of the results of the Contract. The relations pertaining to such transactions and the obligations arising therefrom shall be regulated by the rules governing the relations pertaining



պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:


7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ»

to those transactions, and the Executor shall be liable for them.

7.8. The Contract may not be modified as a result of failure by the Parties to partially perform their obligations or may not be fully rescinded upon the mutual consent of the parties, except for cases of reduction of financial allocations required for provision of services as prescribed by the legislation of the Republic of Armenia. Moreover, mutual consent of the parties on failure by the parties to the Contract to partially perform the obligations or on full rescission needs to be obtained prior to reduction of the financial allocations required for performance of the works as prescribed by the legislation of the Republic of Armenia.

7.9. The notification on full or partial unilateral rescission of the Contract on the ground of non-performance or improper performance of the obligations assumed by the Executor shall be published by the Client at the “Notifications on unilateral rescission of contracts” section of the website at the following address: www.procurement.am, with the indication of the date of publication. The Executor shall be considered to be properly notified of the unilateral rescission of the Contract from the day following the publication of the notification under the procedure specified in this point. On the day the notification on full or partial unilateral rescission of the Contract is published in the bulletin, the Client shall also send it to the



բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

electronic mail of the Executor.

7.10. Any dispute arising from the Contract shall be settled through negotiation. In case of failure to reach an agreement, the disputes shall be settled in the courts of the Republic of Armenia.

7.11. The Contract is composed of ___ pages; it is concluded in two originals of equal legal effect. Annexes No 1, No 2, No 3 and No 3.1 to this Contract shall be the integral part of the Contract; each Party shall be provided with one copy of the Contract.

7.12. The applicable law for this Contract shall be that of the Republic of Armenia.



8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ


ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Երևան Վ.Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011031946
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝
Դ. Գապարյան


ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Նուեվո Դիզայն Իվենթ Օրգանայզինգ»
ՍՊԸ
2003 Damac Smart Heights, Barsha Heights,
Dubai, UAE
SWIFT NBSHAEASXXX
IBAN AE460410000012237953003
TRN 104276661600003
Տնօրեն՝
Ա. Բոբրուշևա


 (ստորագրություն)
 Կ.Տ




 /ստորագրություն/
 Կ.Տ

8. ADDRESSES, BANK DETAILS AND SIGNATURES OF THE PARTIES



CLIENT

Ministry of High-Tech Industry
 of the Republic of Armenia
 3/3 V. Sargsyan, Yerevan
 Operations Department of the Ministry of
 Finance of the Republic of Armenia
 No 900011031946
 TIN: 02565518
 Secretary General
 D. Gasparyan

EXECUTOR

Nuevo Design Event Organizing L.L.C
 2003 Damac Smart Heights, Barsha Heights,
 Dubai, UAE
 SWIFT NBSHAEASXXX
 IBAN AE460410000012237953003
 TRN 104276661600003
 Director
 A. Bobrysheva


 (signature)
 Seal



 (signature)
 Seal


Հավելված N 1
 «18» 08 2025թ. կնքված
 ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-2025/05 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Եվրո/դրամ

աշխատանքներ							մատուցման		
հրավեր ով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	միավորի գինը/Հ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	45211173	տեխնիկական բնութագիրը*	Եվրոյին համարժեք ՀՀ դրամ	66,563 Եվրոյին և համար	66,563 Եվրոյին համար	1	«ՋԱՅՏԵ ՔՄ ԳԼՈԲԱ Լ 2025»,	1	09.10.2025- 18.10.2025

		տաղավար ի նախագիծ ը կցվում է		ժեք ՀՀ դրամ	ժեք ՀՀ դրամ		Ք. Դուրայ, ԱՄԷ		
--	--	---------------------------------------	--	----------------	----------------	--	----------------------	--	--

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ¹

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԻԱՎՈՐ	ՔԱՆԱԿ
ԱՏԱՂՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ/ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ/ ՆՅՈՒԹԵՐ				
1.	Հատակ	Մակերես՝ 10մX6.5մ Հատակի մատակարարում և տեղադրում: Բարձրությունը՝ 10սմ՝ մոխրագույն անփայլ մելամինե երեսապատմամբ, ամբողջ եզրագծով կապույտ նեոնային LED լուսավորությամբ, երկու կողմից թեքահարթակ:	քմ	65
2.	Պահոց և պատեր	Պահեստային սենյակ Չափսեր. երկարությունը՝ 4500մմ, լայնությունը՝ 1000մմ, բարձրությունը՝ 3000մմ: Դիմային պատ Մատակարարում և տեղադրում. լուսային տուփ՝ սև եզրագծով, մի կողմը՝ կանաչ լամինատից, երկու կողմերում՝ ներքին լուսավորությամբ: Պահեստային սենյակի դուռ՝ դարակներով: Ետին պատ Մատակարարում և տեղադրում. դեկորատիվ ալիքաձև կառույց՝ սև կլոր պլաստիկ խողովակներով, միայն դիմային հատվածում՝ սպիտակ լուսավորությամբ: Էկրանի համար կտրվածք՝ եզրային սպիտակ լուսավորությամբ:	փաթեթ	1
		Հայելի՝ պահոցային սենյակի համար (չափսերը՝ 400մմ X 600մմ)		
3.	Կախովի կառույց	Չափսերը՝ 6000մմ x 4000մմ: Բարձրությունը՝ 100մմ: Մատակարարել և տեղադրել MDF-ով պատված ֆերման, որի ետին մասը պատված է անփայլ ներկով:	փաթեթ	1
4.	Կախովի կառույցի լուսավորություն	Մե. գույնի (տեքստիլ կամ փայտ) + կլոր սև պլաստիկ խողովակներ + միայն դիմային կողմից՝ սպիտակ լուսավորություն՝ համաձայն դիզայնի:	փաթեթ	1
5.	Ipad պատվանդան	1 մ բարձրությամբ, 32 դյույմ պատվանդան՝ iPad-ի համար նախատեսված: Պատրաստված MDF նյութից, ներկված անփայլ ներկով՝	հատ	4

¹ Յուրաքանչյուր կետ պետք է համապատասխանի դիզայնին՝ պատվիրատուի նախնական համաձայնությամբ:

		ըստ դիզայնի գույների: Պատվանդանի վրա տեղադրված է լուսավորվող տարրերանշան:		
6.	Տեղեկատվական ստենդ	Չափսերը՝ 1150 մմ x 325 մմ x 2000 մմ: Պատրաստվում և տեղադրվում է MDF նյութից կառույց՝ անփայլ գույնով ներկված՝ ըստ դիզայնի գույների՝ 2 կամ 3 LED լուսարձակող գոտիով, լուսավորվող տարրերանշանով ու տեքստով, թափանցիկ ակրիլի վրա փորագրված սպիտակ տառերով:	հաստ	4
7.	Դեկորատիվ տարր	Պատրաստվում և տեղադրվում է MDF կառույց՝ ներկված սև և անփայլ ներկով, ձողային լույսերով (քանակը՝ ըստ դիզայնի) + ալիքաձև տարր, երկու շարքով:	հաստ	1
8.	3D «ARMENIA» նշան՝ կախովի կառույցի վրա	Բարձրություն՝ 675մմ x երկարություն՝ 4100մմ x հաստություն՝ 0.1մ: Մև մետաղական շրջանակ տառերը՝ ֆիքսելու համար + 3D լուսավորվող տառեր:	հաստ	4
9.	Ընդունարանի սեղան՝ առջևի մասում լուսավորված տարրերանշանով	Բարձրությունը՝ 1000 մմ, երկարությունը՝ 1800 մմ: Մասակարարում և տեղադրում. MDF տուփ՝ ներկված կանաչ գույնով, լուսավորված տարրերանշանով, փակվող դռներով և դարակներով: Ընդունարանի ներքևի մասում թաքնված լուսավորությամբ:	հաստ	1
ԳՐԱՅԻՎԱ/ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ				
10.	Լուսավորվող տուփի համար նախատեսված ետևից լուսավորվող պաստառ	Բարձրությունը՝ 3000մմ, երկարությունը՝ 4500մմ:	փաթեթ	1
ԿԱՀՈՒՅՔ				
11.	Մուրճի սեղան		հաստ	4
12.	Մուրճի սեղանի աթոռներ		հաստ	12
13.	Աթոռ՝ մեջքով	երկար, մետաղական ոտքերով	հաստ	2
14.	Պուֆ		հաստ	12
15.	Պահոցի դարակներ		փաթեթ	2
16.	Աղբի դույլեր		հաստ	6
ՏԵՍԱԶԱՅՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ				
17.	32-դյույմ սենտրային էկրան՝ ներկառուցված համակարգչով		հաստ	4
18.	86-դյույմ հեռուստացույց		հաստ	1
19.	Աջակցող աշխատակից միջոցառման օրերին (ըստ անհրաժեշտության)		փաթեթ	1
20.	2 բարձրախոս և 1 միկրոֆոն		փաթեթ	1
ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ				
21.	Սենտրային էկրանների համար նախատեսված 3 ծրագրային ապահովում		փաթեթ	1
22.	Բովանդակություն	Հատուկ մշակված ինտերֆեյս (UI)՝ 4-5 կոճակներով	փաթեթ	4
ՕԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ				

23.	Միջոցառման ընթացքում տեխնիկական աջակցություն		հատ	1
	Տեղադրում (առնվազն 5 օր), ապամոնտաժում, տեղափոխումը Դուբայ			
Ցուցահանդեսային ծառայություններ				
24.	Էլեկտրամատակարարման հզորություն	1 ֆազ 30 Ա	փաթեթ	1
25.	Էլեկտրամատակարարման հզորություն	1 ֆազ 15 Ա	փաթեթ	1
26.	Էլեկտրական շղթայի վերամբարձ սարք		փաթեթ	6
27.	Էլեկտրամատակարարում առաստաղից	Հզորությունը՝ 3 ֆազ 30 Ա	փաթեթ	1
28.	3 ֆազ 15 Ա միջոցառման օրերին		փաթեթ	1
29.	Տրասսեր	30 գ/մ	փաթեթ	1
30.	Wi-fi 5-49 օգտագործողի համար		փաթեթ	15
31.	Գիշերային մաքրության ծառայություն		փաթեթ	40
32.	Մաքրուի ու ծառայություն ցուցահանդեսի ժամերին (8 ժամ)		փաթեթ	5
ՖՈՏՈ և ՎԻԴԵՈ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
33.	1 ր նկարահանում + 100 լուսանկար (1 օր՝ 3 ժ ընթացքում)		փաթեթ	1
ԱՅԼ				
34.	Ջուր		հատ	150
35.	Սուրճի ապարատ պատիճներով		հատ	1
36.	Սուրճի պատիճներ		հատ	200
37.	Միանգամյա օգտագործման սուրճի թղթե բաժակներ		հատ	250
38.	Ապակե տարա կոնֆետների համար		հատ	5
39.	Կոնտրակտորների և երրորդ կողմի պատասխանատվության ապահովագրություն		փաթեթ	1

Տաղավարի պատրաստման և տեղադրման աշխատանքները պետք է պատրաստ լինեն 2025 թվականի հոկտեմբերի 11-ին՝ մինչև ժամը 18:00-ն, իսկ ապամոնտաժման աշխատանքները պետք է կազմակերպվեն 2025 թվականի հոկտեմբերի 18-ին՝ ժամը՝ 08:00-ից:

Կապալառուն՝ ցուցահանդեսների տաղավարների կառուցապատման մեջ մասնագիտացած միջազգային ընկերությունը, պետք է կառուցապատման և ցուցահանդեսի անցկացման օրերին կառուցապատման և տաղավարի հետ առաջացած


խնդիրները կարգավորի դրանց արձանագրման պահից հնարավորինս սեղմ ժամկետում՝ առավելագույնը 24 ժամվա ընթացքում:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
 Երևան Վ.Սարգսյան 3/3
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011031946
 ՀՎՀՀ 02565518
 Գլխավոր քարտուղար՝
 Դ. Գասպարյան

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Նուեվո Դիզայն Իվենթ Օրգանայզինգ» ՍՊԸ
 2003 Damac Smart Heights, Barsha Heights, Dubai, UAE
 SWIFT NBSHAEASXXX
 IBAN AE460410000012237953003
 TRN 104276661600003
 Տնօրեն՝
 Ա. Բոբրուշևսկայա



Annex No 1
 Concluded on 18.08.2025

To Contract under code ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-2025/05

TECHNICAL SPECIFICATION — PROCUREMENT SCHEDULE*

Euro (equal to AMD)


Works									
Lot number provided for by the invitation	Intermediate code provided for by the procurement plan, according to CPV classification	Technical specification	Measurement unit	Unit price/ AMD	Total price/ AMD	Total quantity	Delivery		
							Address	Quantity subject to delivery	Time limit
1	45211173	Technical specification attached*	Euro (equal to AMD)	66,563 Euro equal to AMD	66,563 Euro equal to AMD	1	"Gitex Global 2025" Dubai, UAE	1	09.10.2025-18.10.2025

TECHNICAL DESCRIPTION²

Nº	DESIGNATION	DESCRIPTION	UNIT	QUANTITY
----	-------------	-------------	------	----------

² Each item must correspond to the design, subject to prior client approval.

CARPENTRY/ PRODUCTION/ MATERIALS				
1.	Flooring	DIMENSION (10mX6.5m) Supply and Install H-10cm Flooring + Grey matt melamine Finishing + Blue neon LED Skirting All around + 2 sides Ramp.	m ²	65
2.	Storage Area and Walls	<p>Center Storage Area Dimension - L=4500mm. D=1000mm. H=3000mm.</p> <p>Front wall Supply and Install Light Box + Black Border + One side Green Laminate (Refer Image for color) + Interior light on both Side + Storage room door + Shelves.</p> <p>Back side wall Supply and Install Decorative Wave pattern + circular shape black plastic pipes + White Lighting on front side only + Cut out for TV screen With White Lighting on all sides.</p>	set	1
		Mirror for the storage room (dimension: 400mm x 600mm)	piece	1
3.	Suspending structure	Dimension - 6000mm by 4000mm. H=100mm. Supply and Install truss frame covered by MDF with a back matt roller paint.	set	1
4.	Down lighted part of Suspending structure	Black background (fabric or wood) + circular shape black plastic pipes + white lighting on front side only similar to the design.	set	1
5.	Ipad Podium	Dimension - H=1, screen size is 32". Supply and Install MDF Podium for Ipad with matt spray paint finishing according to design colors + Lighted Push through logo.	piece	4
6.	Information pylon	Dimension 1150mm x 325mm x 2000mm. Supply and install a base of structure in MDF with matt spray paint finishing according to design colors with 2- 3light on LED strip + Lighted Push through logo and text +transparent acrylic with engraved white text.	piece	4
7.	Decorative Element	Supply and Install MDF Structure with a spray paint Black Matt finish + tube lights (number is according to design) + Wave Pattern + 2 Rows.	piece	1
8.	3D Lettering. Logo ARMENIA at Suspending structure	Dimension - H 675mm x L 410mm x Thickness 0.1m. Black metal frame for fixing letters + 3D light box letters	piece	4
9.	Reception desk with the Lighted Push through logo on the front side	Dimension - H=1000mm, L=1800mm. Supply and Install MDF box in Spray paint (Green as per image) + Logo with Lights + lockable doors and shelves + cove light on the bottom of the reception.	piece	1
GRAPHICS/PRINTING				
10.	Backlit banner for light box	H=3000mm/ L=4500mm	set	1
FURNITURE				
11.	Coffee table		piece	4
12.	Coffee table chair		piece	12



13.	Bar stool with back	high, with metal legs	piece	2
14.	Ottoman		piece	12
15.	Storage shelves		set	2
16.	Trash bins		piece	6
AV				
17.	Touch screen 32" with the built-in PC		piece	4
18.	Regular TV 86"		piece	1
19.	Show run crew if require		set	1
20.	2 speakers and 1 mic		set	1
CONTENT AND INTERACTIVE PROGRAMMING				
21.	Programing for 3 buttons for touch screen		set	1
22.	Content	Custom UI (4-5) buttons	set	4
SERVICES				
23.	Show days technical support Installation (minimum 5 days), dismantling, transportation: Dubai		piece	1
Exhibition services				
24.	Build-up power	1 phase 30 Amp	set	1
25.	Build-up power	1 phase 15 Amp	set	1
26.	Electric chain hoist		set	6
27.	Ceiling Power Supply	power 3 Phase 30 Amp	set	1
28.	3 Phase 15 Amp show day		set	1
29.	Trusses 30 run/m		set	1
30.	Wi-fi Between 5 and 49 users		set	15
31.	Nightly Standard Cleaning		set	40
32.	Standby Cleaner (8 hours)		set	5
PHOTO&VIDEO				
33.	Video for 1 min + 100 photos (videographer for 1 day of exhibition for 3 hour)		set	1
OTHER				
34.	Water		piece	150
35.	Coffee machine with capsules		piece	1
36.	Coffee capsules		piece	200
37.	Disposable paper coffee cup		piece	250
38.	Glass vase		piece	5
39.	Contractors' and 3-rd party liability Insurance		set	1

The construction and installation of the pavilion must be completed by October 11, 2025, no later than 6:00 PM, and the dismantling works must be carried out on October 18, 2025, starting from 8:00 AM.

The contractor, an international company specializing in the construction of exhibition booths, must resolve construction and stand issues as soon as possible, within 24 hours from the moment the issues are registered.

CLIENT

Ministry of High-Tech Industry
of the Republic of Armenia
3/3 V. Sargsyan, Yerevan
Operations Department of the Ministry of

EXECUTOR


Nuevo Design Event Organizing L.L.C
2003 Damac Smart Heights, Barsha Heights,
Dubai, UAE
SWIFT NBSHAEASXXX

Finance of the Republic of Armenia
 No 900011031946
 TIN: 02565518
 Secretary General
 D. Gasparyan

IBAN AE460410000012237953003

TRN 104276661600003

Director
 A. Bobrysheva



Հավելված N 2
 «18» 08 2025 թ. կնքված
 ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-2025/05 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Եվրո/ ՀՀ դրամ

		Աշխատանքների													
հրավեր ով նախատ եսված չափարա ժնի համարը	գնումների պլանով նախատես ված միջանցիկ ծածկագիր ը՝ ըստ ԳՄԱ դասակարգ ման (CPV)	անվանում ը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211173	Տաղավար ի կառուցա պատման աշխատա նքներ	--	--	--	--	--	--	--	19,968	19,968	66,563	66,563	66,563	66,563

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
 ՀՀ բարձր տեխնոլոգիական
 արդյունաբերության նախարարություն
 Երևան Վ.Սարգսյան 3/3
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011031946

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
 «Նուեվո Դիգայն Իվենթ Օրգնայզինգ»
 ՍՊԸ
 2003 Damac Smart Heights, Barsha Heights,
 Dubai, UAE
 SWIFT NBSHAEASXXX

D. Gasparyan

Director
A. Bobrysheva



(signature)

Seal



(signature)

Seal



Հավելված 3
2025 թ. կնքված

ԲՏԱՆ-ՄՄԱՇՁԲ-2025/05 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴԻԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «___» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

Կատարված աշխատանքների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

--	--	--	--	--	--	--	--	--

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Annex 3

Concluded on _____ *2025*

To Contract under code FSUՆ-ՄԱԱՇԶԲ-2025/05

Party to the Contract

Registered office _____

IN _____

TIN _____

Client

Registered office _____

IN _____

TIN _____

PROTOCOL No

ON DELIVERY AND ACCEPTANCE OF RESULTS OF THE IMPLEMENTATION OF THE CONTRACT OR A PART THEREOF

— 20

Title of the contract (hereinafter referred to as "the Contract" _____

Date of conclusion of the Contract: " _____ " " _____ " 20 _____

Contract number: _____

The Client and the Party to the Contract, taking as a basis Invoice No _____ on the performance of the Contract, written off on _____ 2025, drew up this Protocol on the following:

The Party to the Contract has performed the following works under the Contract:

No	Works performed					
	Name	Summary of the technical	Quantity index	Performance period	Amount subject to payment	Time limit for payment

		specificat ion			(thousand drams)	(according to the Payment Schedule)
		According to the Procureme nt Schedule confirmed by the Contract	Actual	According to the Procurement Schedule confirmed by the Contract	Actual	

The Invoice and the positive opinion having served as a basis for the bilateral approval of this Protocol shall constitute an integral part of this Protocol and shall be attached thereto.

Work has been delivered by

Work has been accepted by

signature

signature

name, surname

name, surname

Seal

Seal

Annexe 3.1

To Contract under code FSUՆ-ՄԱԱԵԶԲ- 2025/05

ACT No

on recording the fact of delivering to the Client the deliverable under Contract

It is hereby recorded that within the scope of Procurement Contract No _____

concluded number of the Contract between _____

(hereinafter referred to as "the Client")

name of the Client and _____

(hereinafter referred to as "the Executor")

name of the Executor on _____ 20_____ the Executor delivered the

below-specified works to the Client for the purpose of delivery and acceptance on _____

20_____

Work		
Name	Measurement unit	Quantity (actual)

This Act shall be drawn up in two originals, each Party shall be provided with one copy.

PARTIES

Delivered

Accepted

Representative having drafted the bid:

name, surname

name, surname

signature

signature